


ԵՂՄՈՆԴ ԴԵ-ԱՄԻՉԻՍ

ԵՒ

ՅՈՒՇԲ ԼՈՆԴՐԱՅԻ



Աշխարհիս մեծագոյն և քան գամենն առեւ լի բազմամարդ, հարուստ և վաճառաշահ քաղաքն է Լոնդրա. գայն տեսողաց քեմենն մարդ հիացում միայն կը լսէ, և ոչ երբեք իրական նկարագիր. առնեայն գրիչը և հանձարք կը փոքրկանան նորս մեծութեան առջև. Ալյուսիս հրապոյր մ' ոսնի այդ եզակեան քաղաքն, որ նախ կը դիտէր, յետոյ կ' ափշեցընէ և գրեթէ անգգայութեան վիճակի մէջ կը ձգէ գմարդ՝ խռան և լափազանց զգացմանց ներքև. բնկձեղով, ինչպէս պատահեր է Եղմունդ Դե-Ալյուսիսի:

Սա արդեն ժամօր է « Բազմալիպի » ընթերցողաց՝ Լ. Պոլիս և Սիրս գողտրիկ գրութեամբք: Երևած է յիմենյ, Պիեմունտի մէջ, յամին 1846. յետ լիտւի յաշողութեամբք աշարտելու իւր ուսումնական շրջանը կոնկենյի յիկեռնին մէջ, գրեթէ քանարստ՝ մտաւ ի գիւնադական վարժարանն Մոդենայի, ուր գիւնաց գործածութեան մէջ այլ հաշաար գրիլ՝ քաջ և ձարտար հանրակացաւ, որուն փորձը ցրցոց յետոյ կոշաղգայի պատերազմին մէջ յամին 1866: Միէ տարի վերջ՝ Փրորենտիոյ մէջ Չինուորական Իտալիա կոչուած բերքին տեսնու էրաց, յորում՝ գեղեցիկ վկայեր և իւր զինուորութեան միջոց պատահած դիպուածոց նկարագիրներ հրատարակեց, որոնք հրաշայիք մ' են՝ բէ՝ զգացման մասամբ, և թէ զտարածաբանութեամբ և միանգամայն յեղբայն և. թէ այն գեղեցկութեամբ: Դեռ բոլորովին ձեւքն լի ձրգած գեղք՝ հրատարակեց Չինուորական կեանք կոչուած գիրքը, որով ցրցոց երիտասարդ հեղինակն՝ թէ գրիլն աւելի զօրաւոր և զօրակար գործիք մ' էր իւր ձեւքը քան տալն: Այնուհետև. բողոց ի սպաս զինուորական ասպարեզը, և սկսաւ գրականութեամբ պարսպիլ, առ որ բնական միտում մի կը զգայր արդեն մանկութենէ ի վեր: Գրականութեան մէջ բոլորովին նոր մասնաձիղ մ' ընտրեց իրեն, որ իրմէ յառաջ անմշակ բողոցած էր իտալիոյ մէջ,

որ է՝ պատմութեան ուղեորութեանց, նկարագրութեան օտար երկիրներու և սովորութեանց:

Երախ Սպանիայէն սկսաւ, այն երկրէն՝ որ լի է ասպետական համբաւով և քերթողական գրոյցներով: Այս գրքին մէջ՝ նիւթոյն յարմար՝ փափուկ և զգայուն ոճ մ' ոսնի հեղինակս. իւր վրայ ըրած տպաւորութիւնք բոլորն այլ լուսաւոր և գոհարք կնիք մի կը կրեն վրանի՝ լուսաւորութիւն մի, որ բնաւ լի տեսնուի իրեն միւս գրութեանց մէջ: Սակայն իւր հանձարոյն ձկունութիւնք և նկարագրութեան ձորաւորութիւնք փորձելու համար՝ կը բողոց իրենեան բերակողոյն շերտիկ պայծառութիւնք, և կ' ածցնի Ստորին-Երանգաց մասախապատեցութիւն երկիրը: Երեսոյ, համառօտ ակնարկներ ևս տալով Պարիսն և Լոնդրայի՝ գորս շտապով այցելեք էր, կը դառնայ արևուտ աշխարհները. նախ ի Մարոկ, որուն վրայ գրելու միջոց՝ կըցաւ լուսոյ միօրինակութենէն զգոշանալ, ինչպէս գիտցաւ և Լոնդնայի մէջ զգոշանալ մասախալուի և տոռերի միօրինակութենէն. ապա ի Լ. Պոլիս, յորում տեսաւ և հրաշայի կերպով նկարագրեց երկու աշխարհներուն իրաւանցութիւնք, քախտմը, խաւնորդը Եւրոպիոյ և Ասիոյ, երկու քաղաքականութեանց, երկու կրօնից, և գանձանք ազգերու՝ պայծառ երկնքի և ծովու ազդեցութեանց ներքև, որոնք անմեման են աշխարհիս վրայ:

Երո տեսակ գրութեան մ' առիթ տուին իրեն գաղթականութիւնք. Հարաւայիկ Սիւերիկա գաղթող իտալացիք, շերտով հեղինակիս համբաւը՝ այն տեղ հրաշարեցին զինքը, որպէս զի իրենց բողոց՝ քայց արտով կապուած հայրենեացը վրայ խօսի, որ այն վերջին տարիներուն մէջ քաւական փոխութիւն և գաղթացք էր ուսմամբք և ձարտարութեամբք: Բնգոռնեցաւ նա հրաշարը. և միևնչեւ ամենքն այլ ևս աւելի գաղթականք՝ կը սպասէին թէ այդ ուղեորութեան արդիւնք պիտի լինէր գիրք մի, յորում նկարագրէր այն երկիրները և մարդիկը,

ևս ընդ հսկատակն՝ Ովկիանոսը կտրած պահանջն՝ կը մտածէր բոլորովին ուրիշ նոր ուժով գրոշխէին մի հրատարակել, յորում երևեր ինքն միանգամայն իրր յուրջ մատենագիր, խորաբարփանքն և դիտող միտքը:

Որչափ որ տարիքն յառաջեց՝ նոյնչափ ևս փորձ եղաւ աշխարհի և մարդկային ընկերութեանց, որով իւր նախկին յառատեստարիւնն ևս յոստնետարեան փոխտեցաւ: Այնուհետև բնութեան ամենայն երևոյթք և ասարկայք յայս նորա կորոշսին իրենց փայլը. ինքն այլ ամփոփեց իրեն քերթողական բռնիք՝ որ բերաւ յոգնած էր, և սխառ բարոյական և հոգեբանական ուստնմասիրոշքեամբ պարսպիլ, որայ արդիւնք եղաւ Բարեկամք անուանը գիրքը: Մտք գիտորդեանը յի գրութիւն մ'է՛, այլ յաճախ ամբաստան գաղափարներով տողալուած, որոշ նպատակն է ցուցընել — տխուր ձըմարտութիւն — քե ասկաք են ստոյգ բռնեկամք՝ աշխարհիս վրայ տիրացեալու անձնաիրոշքեան, շահահնդրութեան, նահանգնաւ և այլ պէսպէս կրից պատերազմին մէջ: Միևն հասարակութիւնն իւր սովորական խանդի զբաղած էր կարողաշու այն եղեր, ասկաւ մի ախշած Դե—Ամիլիաի մոգական գրչին գծած նոր ուղղութեան վրայ, հեղինակն յսիլ — ինչպէս ստոյր էր միշտ — ուրիշ երկասիրութիւն մի կը պատրաստէր, որոշ ներշնչութիւնն ունեցեր էր ժողովն վրայ յԱմիլիայ ձանապարհորդած միւրջ: Եւստն վրայ ձանցւաւ նա մօտեն գաղթողաց խաւերը, որոնք՝ մեծամեծ յոյսերով լի՝ դէպ ի նոր աշխարհը կը տանէին իրենց բշտաւորութիւնները, զանոնք դարմանելու յոշնով և ինսպիւնչեալ Ելլորայական ⁽¹⁾ աշխարհ մի երազած աստուածութեանց մէջ: Եղաւ բշտաւորութեան վրայ յոգնած, տեղեր՝ մարդիկ և իրեր նկարագրեալ վարժ գրչով վիպասանեալ բիւն մի գրեց, Ովկիանոսի վրայ տիտղոսով, յորում ընթերցողն կը զգայ հեղինակին կարեկցութեան բարսխաւոր և սրտին դառնութիւնը՝ որ չէ կարող զօնել այնքան բշտաւորութեանց: Հագիւ քե տոյն գիրքը աւարտեց, ուրիշ բշտաւորութեան խաւեր մ'այլ գրաւեց նորա ուղի և գաւոր, այս է՝ մանկութիւնն, որ զբարոյական առաջին տարիներուն մէջ քերականական աշխարհը մանրամասնութեանց ներքե կըմտնած և հետևակ գաւազգրէր ձեռքորնին տրտնած, բնաւ ուսմանց և կրթութեան մէջ զգալի յառաջադիմութիւն չեն ընէր: Այս բռ-

նիս դարման մ' ընելու նպատակաւ գրեց Միւտը, — այսպէս կոչեր է՝ զի տղայոց սիրտը կրթելու պիտի ծառայէ, — յորում յի են այնպիսի առաջինի և վեհանախ գաղափարներ, որ անկարելի է կարդալ զայն ասանց անոյշ զգացում մի կրելու: Մոյն յրաւական մէջ մտնելին յետոյ, Դե—Ամիլիայ աշակերտներին վարժապետաց եղաւ, որոնք նոյնչափ բշտաւորութեան, յորոնց կրթներն քե և անծանօթ չեն հասարակութեան, այլ գրեթէ միշտ մոռոցնած և անփոք եղած. տոյն առթիւ գրեց Վարժապետի մի վէպն: Այս եղաւ Դե—Ամիլիայ վերջին գրութիւնն, եթէ չուզեն յիշել նորա ուրիշ ձեռնարկական և դպրոցական հանդիսից առթիւ խօսած բազմաթիւ ձառերը:

Դե—Ամիլիայ գիտաւոր յատկութիւնք են փափուկ զգայնութիւն, յստակ թացատրութիւն գաղափարաց, ձոյն երևակայութիւն, չեղնութիւն զգացման՝ որ աստուկ կը յազէ ընթերցողը, պարզ և վայելուչ ներդաշնակութիւն ունի: Մասկայն յաճախ նորա ունեցած բռնաւ տպաւորութիւնք ձգած են զիւրը լսափազանց զգացմանց և թացատրութեանց մէջ. որով քե և յի սխալիր բնաւ, թայց մերք ձըմարտ գրած իրերն այլ այնչափ կը մեծցեն, կը ձոխացնեն, կը գեղեցկացնեն, որ գրեթէ ձըմարտութեան սահմանէն դուրս կ' ելնէ. այսպէս օրինակ իմն, այն անձիւնք՝ որոնց այնպիսի գեղեցիկ ձիրքեր կ' ընծայէ, կարծես քե իրականութեան մէջ անկարելի պիտի լինի գտնել զանոնք. տոյն աշխարհի և եսանքը՝ որով յաճախ հեղինակին աչքին արտասուք կը հոսեն՝ գեղեցիկ աշխարհի, անմեան տեսարանի, արդեւտոյի հրաշակերտի, կամ նշանաւոր մարդու մ' առջև, պրպաշի կը նմանին որ մէկ վայրկեանի մէջ կը յոստնան:

Գալով աստիկայ գործոյս, տոյն Յուլի կամ Յիւլատակք, ինչպէս կոչեր է զայն հեղինակը, նախ և առաջ հրատարակուէր են ի Միլան, Իտալական պատկերազարդ Հանդիսին մէջ, ասանց յատուչ գիրք ձևացնելու գիտմանէ Մասկայն այնչափ պիտորձելի եղաւ ընթերցողաց՝ նկարագրներու ձընարեան և կենդանութեան պատճառաւ, որ ընթերցողը փափաք յայտներ են քե՝ հրատարակչին և քե հեղինակին՝ ասանկին հաստորի մի կազմելու համար: Հեղինակն շատ դժուարութեան հասանէր է այդ փափաքին, խնդրելով հրատարակչին՝ ժանոցանել ընթերցողաց՝ քե այս է՝ չերն յրազրի համար գրուած են, հետևաբար պետք չէ իրրոն գիրք նկատել և ընկադատել զանոնք:

Հ. Յ. Վ. Թորոնսեան

1. Eldorado, սպանիական բառ է, որ կը նշանակէ Ուլիսէս: Կը գործածուի սա՝ երևակայում աշխարհ մի նշանակելու համար, ուր կը գտնուին իբր թէ ամեն տեսակ հարստութիւն և երջանկութիւն: